

1 Յունուար 2009

Մեծայարգ Ատենապետներ
Եւ Յարգելի Անդամներ Հ.Բ.Ը.Միութեան
Շրջանակային Յանձնաժողովներու
Մասնաժողովներու ,Կրթական Յանձնախումբերու,
Ենթայանձնախումբերու Եւ Երիտասարդ Արհեստավարժներու

Յարգելի Անդամներ,

Նոր Տարուան սեմին, զոհունակութեան եւ զնահատանքի ջերմ զգացումներով կ'ողջունենք ձեզ բոլորդ: Մինչ ուրախութեամբ կը նշենք անցնող տարուան միութենական բեղուն գործունէութիւնը, կը գիտակցինք, թէ մեր դիմաց կը ցցուին նոր հրամայականներ, որոնք դիմագրաւելու կը պատրաստուինք պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ եւ համագործակցութեան ոգիով:

Անցնող 2008 տարին, որ հայ իրականութենէն ներս յատկանշուեցաւ ազգային, քաղաքական եւ հոգեւոր կարեւոր իրադարձութիւններով, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան համար եղաւ նոր ուղղութիւններու եւ հերթափոխութեան շրջան մը:

Միութեան հայրենի թէ սփիւռքահայ լայնածաւալ ընթացիկ ձեռնարկներուն կողքին, գործադրութեան փուլի մէջ մտան շարք մը կարեւոր նախաձեռնութիւններ, ինչպէս նոր սերունդի դիմագիծի մշակումին ուղղուած ծրագիրները Հայաստանի մէջ, որոնց շարքին արտասահմանեան ուսանողներու համար Հայաստանի մէջ կարճատեւ ուսումնառութեան միջոցառումը, սկաուտական միջ-մասնաձիւղային Անդրանիկ բանակումը Լոռիի շրջանի միութենապատկան բանակավայրին մէջ, նաեւ հայ լեզուի, պատմութեան ու մշակոյթի ծանօթացումին սատարող վեց լեզուներով համացանցային Հեռավար Գոլէճի ծրագիրը: Ստեղծուեցաւ Միութեան Եւրոպայի Շրջանակային կառոյցը, որ Եւրոխորհուրդի ծիրէն ներս կը շարունակէ ծաւալել միջազգային առումով աշխոյժ գործունէութիւն: 85-րդ Անդամական Ընդհանուր Ժողովը՝ առաջինը նոր դարաշրջանի սեմին, հաստատեց սփիւռքահայ եւ հայրենի իրականութիւններու հոլովոյթէն եւ կարիքներէն թելադրուած ժամանակակից գործելակերպը որ դրսեւորուեցաւ Միութեան կազմերէն ներս նոր եւ երիտասարդ ուժերու ներգրաւումով: Աշխարհատարած մեր դպրոցները շարունակեցին իրենց կրթանուէր աշխատանքը, ուսումնական փայլուն արդիւնքներ ձեռք բերելով: Մեր մասնաձիւղերը իրենց բարձրորակ մշակութային յայտագիրներով եւ մարպական, երիտասարդական եւ սկաուտական գործունէութիւններով աշխուժացուցին գաղութահայ կեանքը: Ասպարէզային փորձառութեան Նիւ Եորքի, Երեւանի եւ Փարիզի ծրագիրները

CENTRAL BOARD OF DIRECTORS:

PRESIDENT - BERGE SETRAKIAN. **VICE PRESIDENT** - ARSHAVIR GUNDJIAN. **TREASURER** - SAM SIMONIAN. **SECRETARY** - BERGE PAPAIZIAN.

HONORARY MEMBER - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians.

MEMBERS - *United States*: M. MICHAEL ANSOUR, CAROL BAGDASARIAN ASLANIAN, JOSEPH BASRALIAN, YERVANT DEMIRJIAN, NAZARETH FESTEJIAN, ARDA HARATUNIAN, SARKIS JEBEJIAN, LEVON NAZARIAN, SINAN SINANIAN, DICKRAN TEVRIZIAN, YERVANT ZORIAN. *Argentina*: RUBEN KECHICHIAN. *France*: ARIS ATAMIAN. *Switzerland*: VAHE GABRACHE. *Syria*: VASKEN YACOUBIAN.

COUNCIL OF TRUSTEES - SARKIS DEMIRDJIAN, RICHARD MANOOGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANOOGIAN SIMONE, KARNIG YACOUBIAN.

DIRECTOR EMERITUS - BARRY ZORTHIAN.

IN MEMORIAM - BOGHOS NUBAR, *Founder*; ALEX MANOOGIAN, *Honorary Life President*.

յաջողութեամբ գործադրուեցան: Մոնթեվիտոյ մէջ կայացան Համագաղութային 18-րդ Մարպահադերը: Հարաւային Բալիֆորնիոյ «Յաջորդ Սերունդ» պատանիներու ընկերային ծառայութեան շարժումը ընդարձակեց իր գործունէութեան ծիրը: Նիւ Եորքի մէջ Հ.Բ.Ը.Մ.ի կողմէ հովանաւորուած կատարողական արուեստներու երիտասարդ տաղանդներ իրենց առաջին խմբային փայլուն ելոյթը ունեցան Գարնէկի Հոլի մէջ: Երիտասարդ արհեստավարժներու շարքերը աշխարհի տարածքին խտացան նոր յանձնախումբերով եւ անոնց գործունէութիւններէն բխող համագործակցութեամբ հաստատուեցաւ Գերմանիոյ Հ.Բ.Ը.Մ.ի գրասենեակը Ֆրանքֆուրթի մէջ:

Այս առթիւ մեր գնահատանքը կը յայտնենք Միութեան Շրջանակային Յանձնաժողովներու, Մասնաժողովներու եւ Յանձնախումբերու հին եւ նոր բոլոր անդամներուն, իրենց առաջնորդութեան եւ աշխատանքներու մէջ ցուցաբերած միութենական բարձր ոգիին համար: Մեր երախտագիտութեան ջերմ վզացումները կը փոխանցենք նաեւ մեր դպրոցներու տնօրէնութեանց եւ ուսուցչակապներուն, իրենց նուիրեալ աշխատանքին համար:

Մինչ Նոր Տարին կը դիմաւորենք լաւատեսութեամբ եւ Ընդհանուր Միութեան նպատակներու իրագործումին ի խնդիր առաւել նուիրուածութեամբ, խորապէս կը գիտակցինք, թէ համաշխարհային տնտեսական իրադրութիւնը, որ սկիսք առաւ անցեալ տարուան ընթացքին, եւ որուն ժխտական հետեւանքները բոլոր մարպերու մէջ պիտի շարունակեն դրսեւորուիլ յառաջիկայ քանի մը տարիներուն եւս, մեզի կը թելադրեն յաւելեալ պատասխանատուութիւն, մեր սուղ միջոցները առաւելագոյն արդիւնաւորութեամբ եւ շրջահայեացութեամբ գործածելու ուղղութեամբ: Առ այդ կը հրաւիրենք ձեզ բոլորդ, միութենական գիտակցութեամբ, բժախնդրօրէն վերարժեւորելու ձեր ծրագիրները եւ որոշելու ձեր նախապատուութիւնները, համապատասխան պիտձէական ինսպրոդութիւններու եւ կամ նոր միջոցառումներով յաւելեալ ներդրում ապահովելու համար: Համոզուած ենք, որ Համամիութենական բարձր ոգիով, ձեր ուժերը կը միացնէք աշխարհատարած մեր անդամակցութեան ճիգերուն, ի խնդիր Միութեան ազգանուէր նպատակներու եւ ծրագիրներու անխափան ընթացքին:

Ձեզի կը փոխանցենք խաղաղ, ուրախ եւ արդիւնաբեր Նոր Տարուան մեր սրտագին մաղթանքները:

Յարգանքներով՝



Պերճ Սեդրակեան
Նախագահ